

ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոս կ.գ.դ. Կ. Գ. Ճենտերեճյանի՝
Հոփսիմե Հովհաննեսի Կոբեյանի «Հրազդան հիդրոէկոհամակարգի
էկոլոգամանրէաբանական բնութագիրը» թեմայով Գ.00.08՝ «Կենդանաբանություն.
մակարուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցվող ատենաատենախոսության
վերաբերյալ

Հրազդան գետը Հայաստանի կարևոր ջրային էկոհամակարգերից է, այն ներառում է
ինչպես գետային, անպես էլ լճային էկոհամակարգեր: Նկատի ունենալով հիմնականում
Հրազդան գետի միջոցով Սևանա լճի ջրային դարավոր պաշարների ինտենսիվ օգտագործումն
էներգետիկ և գյուղատնտեսական նպատակներով, Հոփսիմե Հովհաննեսի Կոբեյանի կողմից
պաշտպանության ներկայացրած «Հրազդան հիդրոէկոհամակարգի էկոլոգամանրէաբանական
բնութագիրը» թեմայով ատենախոսությունն ունի մեծ արդիականություն, իսկ ստացված
արդյունքները կարող են օգտագործվել բազմաթիվ խնդիրների լուծմանը, մասնավորապես
Սևանա լճի ռազմավարական ծրագրերում:

Ատենախոսության նպատակն էր գնահատել Հրազդան գետի էկոլոգամանրէաբանական
արդի վիճակը: Աշխատանքը նվիրված է հետևյալ խնդիրների ուսումնասիրմանը և
վերլուծությանը.

1. Ուսումնասիրել Հրազդան գետի և նրա խոշոր վտակ հանդիսացող Մարմարիկ գետի,
ինչպես նաև Հրազդան գետի վրա կառուցված ջրամբարների մանրէաբանական
ցուցանիշները և զարգացման առանձնահատկությունները:
2. Ուսումնասիրել Հրազդան հիդրոէկոհամակարգի սապրոֆիտ և կոլիֆորմ բակտերիաների
բազմազանության քանակական ցուցանիշների տարածական և սեզոնային դինամիկան:
3. Ուսումնասիրել բորբոսասնկերի և շաքարասնկերի թվաքանակի տարածական
փոփոխությունները տարաբնույթ աղտոտվածության պայմաններում:
4. Բացահայտել սապրոֆիտ մանրէների վրա ազդող հիմնական գործոնները և դրանց
ազդեցության հետևանքով առաջացած քանակական ցուցանիշների փոփոխությունները:
5. Մանրէաբանական ցուցանիշների հիման վրա գնահատել Հրազդան գետի
հիդրոէկոհամակարգի ջրի որակը և էկոլոգիական պայմանները:

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային շարվածքով՝ 143 էջի վրա: Այն կազմված է ներածությունից, հինգ գլխից, ամփոփումից, եզրակացություններից, 184 անուն պարունակող գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքն ընդգրկում է 41 նկար, 20 աղյուսակ և 4 հավելված:

Ատենախոսության առաջին գլխում (12-ից 31 էջեր) տրում են Հրազդան գետի ֆիզիկաաշխարհագրական, հիդրոէկոհամակարգի ջրաբանական, ջրաքիմիական և ջրակենսաբանական բնութագրերը: Ատենախոսության երկրորդ գլուխը (32-ից 37 էջեր) նվիրված է ուսումնասիրված նյութին և ուսումնասիրությունների մեթոդներին: Այստեղ նկարագրված են դաշտային և լաբորատոր այն մեթոդները, որոնք Շ. Կոբեյանի կողմից օգտագործվել են 2015-2020 թթ. ատենախոսության մեջ արծարծված խնդիրները լուծելու համար:

Ատենախոսության երրորդ, չորրորդ և հինգերորդ գլուխները նվիրված են ատենախոսության արդյունքներին և դրանց քննարկմանը:

Ատենախոսության երրորդ գլուխը (38-ից 62 էջեր) նվիրված է Հրազդան հիդրոէկոհամակարգի սապրոֆիտ բակտերիաների քանակական ցուցանիշների տարեկան եվ սեզոնային դինամիկային: Այստեղ ներկայացված են սապրոֆիտ բակտերիաների տարածական և սեզոնային դինամիկայի առանձնահատկությունները, ինչպես նաև հիդրոէկոհամակարգի սապրոֆիտ բակտերիաների տարածաժամանակային դինամիկան 11 դիտակետերում՝ 1. Հրազդան գետի ակունք, 2. Մարմարիկ գետի ստորին հոսանք, 3. Հրազդան գետին Մարմարիկ վտակի միախառնվելուց հոսքով վար, 4. Աղբյուրակի ջրամբար, 5. Հրազդան գետ, Բջնի գյուղից հոսքով վեր, 6. Հրազդան գետ, Բջնի գյուղից հոսքով վար, 7. Հրազդան գետ, «Արզնի» առողջարան, 8. Հրազդան գետ, Գետամեջ գյուղ, 9. «Երևանյան լիճ», 10. «Աերացիա» մաքրման կայանից հոսքով վար, 11. Հրազդան գետի ստորին հոսանք Հովտաշեն գյուղ:

Ատենախոսության չորրորդ գլուխը (63-ից 78 էջեր) նվիրված է Հրազդան հիդրոէկոհամակարգի դիտակետերում գրանցված կոլի-ինդեքսի արժեքների տարեկան եվ սեզոնային դինամիկային վերը նշված 11 դիտակետում:

Ատենախոսության հինգերորդ գլուխը (79-ից 116 էջեր) նվիրված է Հրազդան հիդրոէկոհամակարգի շաքարասնկերի եվ բորբոսասնկերի քանակական ցուցանիշների

տարեկան և սեզոնային դինամիկային: Մասնավորապես, ուսումնասիրվել է շաքարասնկերի և բորբոսասնկերի տարեկան և սեզոնային դինամիկան Հրազդան գետում, Երևան քաղաքի տարածքում, կատարվել է քիմիական ցուցանիշների և սապրոֆիտ բակտերիաների քանակական արժեքների համեմատական վերլուծություն:

Ամփոփում (117-ից 121 էջեր) մասում ամփոփվում են 2-5 գլուխների արդյունքները, նշվում է շրջակա միջավայրի աղտոտման առավել վտանգավոր կենսաբանական, մասնավորապես մանրէաբանական աղտոտումը, շեշտվում են մանրէաբանական տեսանկյունից առավել վտանգված տարածքները և բնակավայրերը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են 9 կետից բաղկացած եզրակացություններում, դրանք հիմնավորված են և տրամաբանորեն բխում են հետազոտությունների արդյունքներից:

Հավելվածում (244-ից 303 էջեր) ներկայացված են լաբորատոր պայմաններում մանրէների միջավայրերը բաղադրությունը, լողալու ջրի որակի գնահատման ԵՄ ստանդարտները, մակերևութային ջրերի որակի գնահատման էկոլոգասանիտարական դասակարգումը և ջրերի դասակարգումը ըստ աղտոտվածության աստիճանի:

Ատենախոսության վերաբերյալ կան որոշ դիտողություններ՝

- Ներածությունում հստակ նշված չէ աշխատանքի արդիականությունը, կապված իրականացված ուսումնասիրությունների հետ:
- 1.4.5. Իխտիոֆաունա մասում անվանումները կրկնվում են, առկա են երկրում բացակայող տաքսոններ, բացակայում է հղում Դադիկյանի «Հայաստանի ձկները» դասական աշխատանքին:
- Ատենախոսության մեջ հղումներ են կատարվել հիմնականում Հայաստանի ու Ռուսաստանի հեղինակների վրա, այլ երկրների գիտնականների ուսումնասիրությունները կազմում են գրականության ցանկի 17%-ը, իսկ վերջին 20 տարում լույս տեսած՝ միայն 7%-ը:

Նշված դիտողությունները անշուշտ չեն նվազեցնում Հոփսիմե Հովհաննեսի Կորեյանի ատենախոսության կարևոր նշականությունը:

Աշխատանքն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն, իսկ նրա արդյունքները կարող են օգտագործվել Հրազդան գետի բնական պայմանների վերականգնման,

պահպանման և օգտագործման համար մշակվող միջոցառումներում, ինչպես նաև կարող են ընդգրկվել մշտադիտարկման ծրագրերում:

Ատենախոսության արդյունքները և դրույթները արտացոլված են ՀՀ ԲՈԿԿ-ի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված 9 գիտական հրատարակություններում:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսություն բովանդակությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հրագրան հիդրոէկոհամակարգի էկոլոգամանրեաբանական բնութագիրը» թեմայով Հոփսիմե Հովհաննեսի Կոբեյանի կողմից իրականացված ուսումնասիրությունները կատարվել են գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսության նյութերը, հիմնական դրույթներն ու ստացված արդյունքներն ունեն գիտական և գործնական բարձր արժեք:

Ատենախոսությունը՝ թեմայի արդիականությամբ, փաստացի նյութի ծավալով և աշխատանքի կատարման մեթոդական մակարդակով, ստացված արդյունքների գիտական նորությամբ, տեսական և գործնական նշանակությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿԿ-ի Հայաստանի Հանրապետությունում գործող գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին, իսկ հեղինակը՝ Հոփսիմե Հովհաննեսի Կոբեյանը արժանի է Գ.00.08 - «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը

Պաշտոնական ընդդիմախոս,

Կենս. գիտ. դոկտոր

Կ.Գ. Ճենտերեճյան

«Կենս. գիտ. դոկտոր, Կ.Գ. Ճենտերեճյանի ստորագրությունը հաստատում եմ»